# ՎՐԱՍՏԱՆ

«ვრასტანი» (საქართველო) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 71 - 72 (16568) ՇԱԲԱԹ, 9 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2017 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ

ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

## «ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅԱՄԲ ԵՎ ՍԻՐՈՎ՝ ԹԲԻԼԻՍԻԻ ՀԱՆԴԵՊ»

### ԻՍԱՆԻԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ ԵՆ ԻԼԻԱ ՁԻՃԿԱՐԻԱՆՈՒ, ՆԻՆՈ ԼԱՃԱԲԻՁԵԻ ԵՎ ԼԵՎԱՆ ԴԱՎԻԹԱՇՎԻԼՈՒ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ




*«Հավատարմությամբ եւ սիրով Թբիլիսիի հանդեպ»՝ այս նշանաբանով «Վրացական երազանքը» ներկայացրեց Թբիլիսիի Մեծամասնական պատգամավորության 25 թեկնածուների: Կայացավ նաեւ «Վրացական երազանք» կուսակցությունից Թբիլիսիի քաղաքապետի թեկնածու Կախի Կալաձեի նախընտրական ծրագրի շնորհանդեսը:*

Կախի Կալաձեն, Վրաստանի խորհրդարանի նախագահ Իրակլի Կոբախիձեն, պաշտոնական այլ անձինք:

Կառավարող կուսակցության 25 թեկնածուն ընդգրկող ցուցակում 19 տղամարդ եւ վեց կին է, ներառված են ինչպես հին, այնպես էլ՝ նոր անուններ:

Թբիլիսիի բուսաբանական այգում տեղի ունեցած շնորհանդեսին ներկա էին եւ ելույթ ունեցան Վրաստանի վարչապետ, «Վրացական երազանք-ժողովրդավարական Վրաստան» կուսակցության նախագահ Գիորգի Կվիրիկաշվիլին, այդ կուսակցությունից Թբիլիսիի քաղաքապետի թեկնածու

- Մեր թեկնածուներն անհատներ են, ովքեր աչքի են ընկնում արհեստավարժությամբ, ազնվությամբ,- այս խոսքերով թեկնածուներին ներկայաց-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

## ԸՆԴԳԾՎԵՑ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՄՈՒԹՅՈՒՆԸ

*Սեպտեմբերի 6-ին Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին հանդիպում ունեցավ պաշտոնական այցով Թբիլիսիում գտնվող վերակառուցման եւ զարգացման եվրոպական (EBRD) բանկի նախագահ Սումա Չակրաբարտիի հետ:*



Հանդիպմանը կողմերը քննարկեցին Վրաստանի եւ բանկի 25-ամյա համագործակցության, բանկի աջակցությամբ Վրաստանում իրականացված նախագծերի եւ երկրի կառավարության չորս կետից կազմված ծրագրին առնչվող հարցեր: Վարչապետը եվրաբանկին շնորհակալություն հայտնեց ցուցաբերած աջակցության եւ համագործակցության համար ու նշեց, որ բանկի օգնությամբ երկրում իրականացվել է շուրջ 200 նախագիծ, ներդրվել՝ ավելի քան 3 միլիարդ եվրո:

- EBRD բանկը Վրաստանի կարեւորագույն գործընկերն է: Միայն 2016 ֆինանսական տարում այդ ֆինանսական ինստիտուտը երկրում իրականացրել է 17 նախագիծ, ներդրել՝ 250 միլիոն եվրո, ինչը աննախընթաց է եւ, հենց բանկի տվյալներով, ռեկորդային ցուցանիշ է: Շատ կարեւոր է բանկի աջակցությունն այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են՝ էներգետիկան, մունիցիպալային ենթակառույցը, փոքր եւ միջին գործարարության զարգացումը: Կարեւոր նշանակություն ունի նաեւ Վրաստանի արտահանման ներուժի ավելացումն ու զարգացումը: EBRD բանկը պաշտպանում է մեր տնտեսական քաղաքականությունը, եւ դա արտա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ

## ԳԻՈՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻ. «ԵՎՐՈՊԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՈՒՄԸ ՄԵՐ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆ Է»




*Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին մասնակցեց լեհական Կրինիցա-Սդրույ քաղաքում անցկացված տնտեսական միջազգային խորհրդաժողովին:*

Ելույթ ունենալով խորհրդաժողովի լիագումար նիստին՝ Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին Լեհաստանի ու Մակեդոնիայի նախագահներ Անջեյ Դուդայի ու Գեորգ Իվանովի հետ հանդիպմանը խոսեց Վրաստանի եվրոպական միտումների ու Ռուսաստանի հետ երկրի հարաբերությունների մասին:

Գիորգի Մարգվելաշվիլին իր խոսքում անդրադարձավ Եվրամիությանը Վրաստանի մերձեցման գործընթացին եւ այդ գործընթացում Ասոցիացման համաձայնագրի, ազատ առեւտրի եւ անայցեգրային պայմանակարգի, պայմանագրերի նշանակության, Եվրամիության բաց դռների քաղաքականության, Եվրամիության ընդլայնման, Վրաստանի եվրաինտեգրման գործընթացում Ռուսաստանի դերին:

Վրաստանի նախագահը հերքեց այն կարծիքը, որ Վրաստանի եւ Ռուսաստանի միջեւ լար-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

## ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԱՋԱՐԻԱՅՈՒՄ

*Սեպտեմբերի 3-4-ին, Բաթումիում Հայաստանի գլխավոր հյուպատոսության աջակցությամբ, մարզպետ Արթուր Նալբանդյանի գլխավորությամբ կայացավ Հայաստանի Լոռու մարզի պատվիրակության պաշտոնական այցը Վրաստանի Աջարիայի Ինքնավար Հանրապետություն: Պատվիրակության կազմում էին Վանաձորի, Ալավերդու եւ Ախթալայի քաղաքային համայնքների ղեկավարները, պաշտոնական այլ անձինք: Այցն իրականացվել է Լոռու մարզի եւ Աջարիայի միջեւ համագործակցության մասին 2014թ. ստորագրված պայմանագրի դրույթների հիման վրա:*



Այցի ընթացքում պատվիրակությունը հանդիպեց Աջարիայի կառավարության նախագահ Զուրաբ Պատարաձեի, Գերագույն խորհրդի նախագահ Դավիթ Գաբաիձեի, Բաթումիի քաղաքապետ Գիորգի Երմակովի, Քոբուլեթիի համայնքի ղեկավար Սուլխան Եվգենիձեի, Աջարիայի մշակույթի, կրթության եւ սպորտի, գյուղատնտեսության, էկոնոմիկայի եւ ֆինանսների նախարարությունների ղեկավարների, Աջարիայի առեւտրաարդյունաբերական պալատի նախագահ Թամազ Թուրմանիձեի հետ: Պատվիրակությունն այցելեց գյուղատնտեսական փորձարարական կենտրոն:

Բոլոր հանդիպումներում եւ քննարկումներում կողմերը կարեւորեցին վրաց-հայկական համագործակցության շրջանակներում տնտեսական, մշակութային, զբոսաշրջության, երիտասարդական շփումների ոլորտներում կապերի ամրապնդմանն ուղղված քայլերի եւ միջոցառումների նախաձեռնումը:

Պատվիրակությունն այցելեց Բաթումիի հայկական Սուրբ Փրկիչ եկեղեցի, ինչպես նաեւ հանդիպումներ ունեցավ հայ համայնքի ներկայացուցիչների հետ:

ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

## ԱՄՆ ԿՈՆԳՐԵՍԱԿԱՆՆԵՐԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

*Աշխատանքային այցով Վրաստանում էր գտնվում ամերիկյան կոնգրեսականների պատվիրակությունը: Սեպտեմբերի 2-ին Նախագահական նստավայրում տեղի ունեցավ Գիորգի Մարգվելաշվիլու հանդիպումը ամերիկյան կոնգրեսականների հետ:*



Հանդիպմանը կողմերը քննարկեցին Վրաստանի դեմ Ռուսաստանի ագրեսիվ քաղաքականության, բռնազավթված տարածքների եւ տարածաշրջանի անվտանգության հետ առնչվող հարցեր: Անդրադարձ կատարվեց նաեւ երկրում ներքին ժողովրդավարական բարեփոխումների ընթացքին:

Քննարկման թեմաներից նշանակալիցը վրաց-ամերիկյան հարաբերությունների զարգացման ու խորացման, ռազմական, տնտեսական համագործակցության ընդլայնման հարցերն էին:

ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

## ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԿԵՆՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՆ ԷԻՆ

*Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլու նախագահությամբ անցկացվեց ներդրողների խորհրդի նիստը, որի օրակարգում էին դատավարական բարեփոխումների, կոմերցիոն պալատների հիմնման նախաձեռնության, գործարարների մասին օրենքի եւ մասնավոր հատվածի համար այլ կենսական նշանակության հարցեր:*

Նիստի աշխատանքին մասնակցեց նաեւ պաշտոնական այցով Թբիլիսիում գտնվող վերա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

# «ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅԱՄԲ ԵՎ ՍԻՐՈՎ՝ ԹԲԻԼԻՍԻԻ ՀԱՆԴԵՊ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ավ Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին եւ վստահություն հայտնեց, որ նրանցից յուրաքանչյուրը կկարողանա հաղթահարել ընտրողների 50 տոկոսի արգելագիծը:

Շնորհանդեսին իր ելույթներում «Վրացական երազանք-ժողովրդավարական Վրաստան» կուսակցության Թբիլիսիի քաղաքապետի թեկնածու Կախի Կալաձեն, Վրաստանի խորհրդարանի նախագահ Իրակլի Կոբախիձեն, խոսելով ներկայացված թեկնածուների արժանիքների մասին, վստահություն հայտնեցին, որ առաջիկա ընտրություններում նրանք արժանիորեն հանդես կգան եւ կնվաճեն ընտրողների վստահությունը, ինչը կդառնա «Կյանքով լի քաղաք» կարգախոսի մարմնավորման հիմքը:

*Սեպտեմբերի 7-ին Հավլաբարում գտնվող Փառնավազ թագավորի անունը կրող պուրակում, Կախի Կալաձեն Իսանիի շրջանի բնակիչների հետ հանդիպմանը, ներկայացրեց Հավլաբարի, Էլիայի եւ Մետրոշինարարների ընտրատարածքներից Թբիլիսի սակրեբուլոյի պատգամավորության թեկնածու Իլիա Ջիշկարիանուն, ինչպես նաեւ Իսանիի մյուս ընտրատարածքներից առաջադրված թեկնածուներ Նինո Լացաբերիձեին եւ Լեւան Դավիթաշվիլուն:*

*- Այս մարդիկ առաջիկա չորս տարիների ընթացքում սակրեբուլոյում կողմնորոշված կլինեն բոլոր այն հիմնախնդիրների ուղղությամբ, որոնք անհանգստացնում են ձեր շրջանի բնակիչներին,-ասաց Կախի Կալաձեն:*

*Բնակիչների առջեւ ելույթ ունեցան նաեւ քաղաքի սակրեբուլոյի պատգամավորության թեկնածուները: Մասնավորապես, թբիլիսահայ համայքին, Իսանիի բնակիչներին քաջածանոթ, տեղական նախորդ ընտրություններին Թբիլիսիի սակրեբուլոյում իսանցիների վստահության քվեն ստացած Իլիա Ջիշկարիանին նշեց, որ, դեռեւս չորս տարի առաջ շրջանի բնակիչների կողմից իրեն շնորհված վստահությունից ելնելով, ինքը մեծ պատասխանատվությամբ սակրեբուլոյին էր հասցնում ընտրողներից յուրաքանչյուրի հիմնախնդիրը:*



Իլիա Ջիշկարիանին եւ Կախի Կալաձեն շնորհանդեսին

*- Շրջանում շատ բան է արվել եւ դեռեւս արվում է, այդ թվում ընթացքի մեջ է 150-ամյա հայկական թատրոնի վերանորոգումը, որն իրականացվում է «Քարթու» հիմնադրամի աջակցությամբ»,- ասաց նա:*

ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

# ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԿԵՆՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՆ ԷԻՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

կառուցման եւ զարգացման Եվրոպական բանկի նախագահ Սումա Չակրաբարտիին:

Նիստում, որպես հեղափոխական քայլ, գնահատվեց դատարաններում կոմերցիոն պալատների հիմնումը եւ այդ ուղղությամբ դատավորների մասնագիտական վերապատրաստումը: Ներդրողների խորհրդի անդամները նշեցին, որ դա կնպաստի կոմերցիոն վեճերի սեղմ ժամկետներում կարգավորմանն ու երկրում առկա գործարարության համար նպաստավոր միջավայրի է՛լ ավելի բարելավմանը:

Վարչապետը խոսեց նաեւ ներդրողների խորհրդի գործունեության նշանակության մասին ու Վրաստանի կառավարության անունից կրկին անգամ հավաստեց վերոնշյալ հարթակի շրջանակներում մասնավոր պատվածի ներկայացուցիչների հետ ակտիվ համագործակցության պատրաստակամությունն այն հաշվով, որպեսզի ապահովվի նրանց առավելագույն ներգրավվածությունը նոր օրենքների եւ կարգավորումների մշակման գործընթացում:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

# ԸՆԴԳԾՎԵՑ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՄՈՒԹՅՈՒՆԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

հայտվում է նրանով, որ նրանց ռազմավարությունն անմիջականորեն առնչվում է երկրի զարգացման չորս կետից կազմված մեր ծրագրին,- հայտարարեց Վրաստանի վարչապետը:

Հանդիպմանը քննարկվեց Վրաստանի նկատմամբ բանկի ռազմավարությունը եւ նշվեց, որ այն ուղղված է Վրաստանի կառավարության չորս կետից բաղկացած ծրագրի աջակցությանը, որը ապահովելու է երկրի տնտեսական արագ զարգացումը, նպաստելու՝ կրթական եւ կառավարման համակարգերի բարեփոխմանը:

Վրաստանի վարչապետը EBRD բանկի նախագահին մանրամասն տեղեկատվություններ ներկայացրեց կենսաթոշակային, կապիտալի շուկայի բարեփոխման ընթացքի մասին՝ նշելով, կենսաթոշակային բարեփոխումը կսկսի գործել 2018 թվականի երրորդ եռամսյակից, եւ որ ներկա փուլում իրականացվում են համապատասխան օրենսդրական փոփոխություններ ու ձեւավորվում անհրաժեշտ ինստիտուցիոնալ եւ տեխնիկական ենթակառույցներ:

ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ

# ԳԻՈՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻ. **«ԵՎՐՈՊԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՈՒՄԸ ՄԵՐ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆ Է»**

(Սկիզբը՝ 1-ին էջում)

վածությունն սկսվեց 2008 թվականին, երբ Ռուսաստանն «իր բանակի օգտագործմամբ իրականացրեց Վրաստանի առանձին տարածքների բռնազավթումը», ինչպես նաեւ «միտումն այն առնչելու ՆԱՏՕ-ին Վրաստանի ինտեգրմանը»: Նախագահի խոսքով, Մոսկվան Վրաստանի դեմ սկսել է վարել հիբրիդային պատերազմ նրանից հետո, երբ երկիրը 90-ական թվականների սկզբին վերականգնեց իր անկախությունը:

- Եթե ռուս-վրացական հարաբերություններին մոտենանք իրատեսական եւ սթափ մտածելակերպի տեսանկյունից, ապա կարելի է ասել, որ Եվրամիությանը Վրաստանի անդամակցությունը օգտավետ է Ռուսաստանի համար, քանի որ այդ դեպքում Վրաստանը կլիներ առավել կայուն եւ տնտեսապես ուժեղ: Դա կարող է նաեւ նախատեսել Ռուսաստանի հետ ընդլայնված գործընկերություն տնտեսական եւ այլ հարցերով,- հայտարարեց Վրաստանի նախագահը:

ԴԱՏԱԿԱՆ

# ՀՈԳԵՎՈՐ ՀԱՅՐԸ ԴԱՏԱՊԱՐՏՎԵՑ ԻՆՆԱՄՅԱ ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ



***Սեպտեմբերի 5-ին Թբիլիսիի քաղաքային դատարանում անցկացվեց «Ցիանիդի» գործով ավագ երեց Գիորգի Մամալաձեի դատավարության եզրափակիչ նիստը: Դատարանը Գիորգի Մամալաձեին ճանաչեց մեղավոր եւ դատապարտեց ինը տարվա արգելափակման:***

Նշենք, որ մեղադրյալն իրեն մեղավոր չի ճանաչել:

Դատարանը ավագ երեցին ներկայացրած մեղադրանքը վերաորակավորեց՝ կանխամտածված սպանության մեղադրանքը վերացվեց եւ մնաց միայն սպանության նախապատրաստման մեղադրանքը: Ավագ երեցը մեղավոր է ճանաչվել նաեւ զենքի ապօրինի ձեռքբերման հարցով:

Նշենք, որ դատախազությունը Գիորգի Մամալաձեին մեղադրում էր Շորենա Թեթրուաշվիլու սպանության նախապատրաստման գործով: Սկզբնական փուլում նա մեղադրվում էր սպանության նախապատրաստման եւ զենքի ապօրինի ձեռքբերման հարցով, թեպետ ուշացումով դատախազությունը մեղադրանքը ծանրացրեց եւ գործը վերաորակավորեց որպես կանխամտածված սպանության նախապատրաստում:

Ավելացնենք, որ ավագ երեց Գիորգի Մամալաձեի գործի հետաքննությունը դատախազությունը ավարտեց ապրիլի 27-ին: Հետաքննչական գերատեսչության վարկածով, իր նյութական եւ պաշտոնական վիճակի պահպանման եւ ապագայում պաշտոնական առաջընթացի ապահովման համար, ավագ երեց Գիորգի Մամալաձեն կանխամտածված ծրագրեց թունավոր նյութերի՝ ցիանիդի օգտագործմամբ, իրականացնել Շորենա Թեթրուաշվիլու սպանությունը:



ԱՄՆ

## «ՀԱՐՎԻ» ՓՈԹՈՐԻԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ՄՈԼԵԳՆԵԼ

*ԱՄՆ-ի Տեխասի նահանգում «Հարվի» փոթորկի զոհերի թիվը հասել է 70-ի: Առնվազն 30 մարդ զոհվել է Հարրիսի օկրուգում, որտեղ գտնվում է Հյուսթոն քաղաքը: Մահվան դեպքեր են գրանցվել նահանգի 13 շրջաններում:*

*Տեխասի նահանգապետ Գրեգ Էբոթը հայտարարել է, որ, «Հարվի» փոթորկի հետեւանքների վերացման համար, կարող է պահանջվել աստղաբաշխական գումար՝ 150 միլիարդից մինչեւ 180 մլրդ դոլար:*

*Վերլուծաբանների գնահատումների համաձայն, «Հարվի» փոթորկը՝ 190 մլրդ դոլարի (երկրի ՀՆԱ-ի 1 տոկոսը) վնասով, կարող է ամենաավերիչը դառնալ ԱՄՆ-ի պատմության մեջ: Հյուսթոնը եւ նրա արվարձանները, որոնց պատուհասել է «Հարվի» փոթորիկը, տալիս են ԱՄՆ-ի ՀՆԱ-ի մինչեւ 3,5 տոկոսը եւ ապահովում երկրի բոլոր աշխատատեղերի 2,4 տոկոսը:*

ԿԱՐԻԲՅԱՆ ԱՎԱԶԱՆ

## ԵՎՍ ՄԻ ՓՈԹՈՐԻԿ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՓԵՐԻ ՄՈՏ

*Կարմիր խաչի միջազգային կոմիտեն հայտնել է, որ Կարիբյան ավազանի կղզիների ավելի քան մեկ միլիոն բնակիչ է տուժել «Իրմա» ավերիչ փոթորկից, եւս 26 միլիոնը գտնվում է վտանգի մեջ:*

*Կազմակերպության տվյալներով, հուժկու փոթորիկը Բարբադոսում ավերել է գրեթե բոլոր շենքերը եւ առանց էլեկտրականության թողել Պուերտո Ռիկոյի բնակիչներին, ինչպես նաեւ զգալի ավերածություններ է գործել Բրիտանական Վիրգինյան կղզիներում, Սեն Մարտեն, Սեն Բարտելեմի եւ Սենտ Քիթս եւ Նեւիս կղզիներում: Վերջին տվյալներով, փոթորիկը 10 մարդու կյանք է խլել:*

*Ներկայում փոթորիկը շարժվում է Հայիթիի կողմը: Այնուհետեւ, դրա ճանապարհին կլինի Կուբան, իսկ հանգստյան օրերին այն կմոլեգնի ԱՄՆ-ի Ֆլորիդայի նահանգում:*

ԻՍՊԱՆԻԱ

## ԿԱՏԱԼՈՆԻԱՆ ԴՈ՞ՒՐՍ Է ԳԱԼԻՍ ԻՍՊԱՆԻԱՅԻ ԿԱԶՄԻՑ

*Կատալոնիայի խորհրդարանն ընդունել է օրենք անցումային շրջանի մասին, որն, անկախության կողմնակիցների կարծիքով՝ իրավական հիմք կստեղծի Իսպանիայի կազմից ինքնավար մարզի դուրս գալու համար:*

*Փաստաթուղթն ուժի մեջ կմտնի միայն հանրաքվեում Կատալոնիայի անկախության կողմնակիցների հաղթանակի դեպքում: Նրանց մտահղացմամբ, օրենքը կգործի երկու ամսվա ընթացքում՝ մինչեւ ինքնուրույն խորհրդարանական հանրապետության ստեղծման գործընթացի կիրարկումը:*

*Ավելի վաղ, Կատալոնիայի խորհրդարանը (Ժեներալիտետ) ընդունել է օրենք հանրաքվեի մասին եւ կից փաստաթղթեր, մասնավորապես, ընտրական հանձնաժողով կազմելու եւ քվեարկության կազմակերպման սկզբունքների մասին: Սեպտեմբերի 7-ին Իսպանիայի Սահմանադրական դատարանն արտահերթ նիստում կասեցրել է այդ բոլոր փաստաթղթերի գործողությունը: Իսպանիայի իշխանությունները նաեւ նախազգուշացրել են Կատալոնիայի զանգվածային լրատվամիջոցներին, ինքնավար մարզի պետական ծառայողներին եւ ոստիկանության ղեկավարությանը դատական վճիռների չկատարման հետեւանքների մասին: Ի պատասխան Սահմանադրական դատարանի վճռի, ինքնավար մարզի կառավարության նախագահ Կառլես Պուչդեմոնը հայտարարել է, որ «Կատալոնիայում ժողովրդավարությունը ոչ ոք չի կանգնեցնի»:*

# Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՀԱՆԴԻՊՈՒՄ

## ԵԱՀԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

*Սեպտեմբերի 7-ին հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով Վրաստանի պետնախարար Քեթեւան Ցիխելաշվիլին հանդիպում ունեցավ ԵԱՀԿ ներկայացուցիչների, մասնավորապես՝ Ժնեւի միջազգային բանավեճերում ԵԱՀԿ-ի համանախագահ Գյունտեր Բեխլերի եւ Հարավային Կովկասի հարցերով ԵԱՀԿ-ի ավագ խորհրդական Արմին Ռիգերի հետ:*



Քեթեւան Ցիխելաշվիլին հյուրերին ներկայացրեց Վրաստանի բռնազավթված տարածքներում եւ բռնազավթված գոտու երկայնքով ստեղծված իրավիճակը, տեղեկատվություն ներկայացրեց բռնազավթման պայմաններում առկա սպառնալիքների եւ մարտահրավերների մասին: Հանդիպմանը ուշադրություն բեւեռվեց Աբխազիայում եւ Ցխինվալիի երկրամասում մարդու իրավունքների, ինչպես նաեւ քրեական ու սոցիալական իրավիճակի վրա: Կողմերը անդրադարձ կատարեցին նաեւ Ժնեւում անցկացվող բանակցային գործընթացին: Վրաստանի պետնախարարն ընդգծեց հակամարտության խաղաղ կարգավորման հարցում ԵԱՀԿ-ի դերը եւ հյուրերին շնորհակալություն հայտնեց ցուցաբերած աջակցության համար:

ԵՌԱԿՈՂՄ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

## ԿԱՆԽԱԳԾՎԵՑԻՆ ԵՌԱՄՅԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

*Սեպտեմբերի 6-ին Բաքվում Վրաստանի, Ադրբեջանի եւ Թուրքիայի արտաքին գործերի նախարարները, ծրագրված հանդիպման շրջանակներում, ստորագրեցին «2017-2019 թվականներին եռակողմ սեկտորյալ համագործակցության գործողությունների ծրագիր»:*

Ծրագիրը նախատեսում է եռակողմ համագործակցություն այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են էկոնոմիկան, էներգետիկան, գյուղատնտեսությունը, շրջակա միջավայրի պաշտպանությունը, նորարական տեխնոլոգիաները:

Բաքվում կայացած հանդիպման շրջանակներում կողմերը քննարկեցին նաեւ Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղային մայրուղու բացմանն առնչվող հարցեր:

Բաքվում Վրաստանի ԱԳ նախարար Միխեիլ Ջանելիձեն հանդիպում ունեցավ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ:

ԲԱՆԱԿ

## ՆԱՏՕ-ի Agile Spirit ԶՈՐԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

*Սեպտեմբերի 3-ին, Վրաստանի Օրփոլոյի վերապատրաստման գոտում, սկսվեցին ՆԱՏՕ-ի զորավարժությունները, որին մասնակցում են տարբեր երկրներից ավելի քան 1500 զինվորականներ: Դասընթացները կտեւեն մինչեւ սեպտեմբերի 11-ը:*

Նախնական տվյալներով, թվով յոթերորդ Agile Spirit զորավարժություններին մասնակցելու էին Վրաստանի, ԱՄՆ-ի, Բուլղարիայի, Ռումինիայի, Լատվիայի, Ուկրաինայի եւ Հայաստանի զինված ուժերը: Ավելի ուշ հայտնի դարձավ, որ զորավարժություններին կմասնակցեն նաեւ Ադրբեջանի զինծառայողները:

Եվ սակայն զորավարժությունների բացմանը հայտնի դարձավ, որ Հայաստանը, համապատասխան հրավերի բացակայության պատճառով, զորավարժություններին չի մասնակցի:

Զորավարժություններ անցկացնելու համար այս տարի Վրաստան են բերվել ամերիկյան «Abrams» տիպի M1 տանկեր, մարտական LAV զրահամեքենաներ, ինչպես նաեւ թեթեւ եւ օժանդակ սարքավորումներ:

Agile Spirit-ը անցկացվում է ամեն տարի, 2011 թվականից: Դրանք Վրաստանի եւ ԱՄՆ-ի հետ ՆԱՏՕ-ի համագործակցության բաղկացուցիչներից են, որտեղ վրացի զինվորականները պատրաստվում են մասնակցելու միջազգային խաղաղապահ առաքելություններին: Agile Spirit-ն իրականացվում է ԱՄՆ ծովային նավատորմի օգնությամբ: Վերջին անգամ նրանք եկել են 2016թ. սեպտեմբերին:

ՇԵՄՈՍԱՎԼԵԲԻՍ ՍԱՄՍԱԽՈՒՐԻ

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

## ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏԱՎ ԵՎՐՈՊԱՅԻ ԱԶԱՏ ԱՌԵՎՏՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ՀԵՏ ՍՏՈՐԱԳՐԱԾ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

*2017 թվականի սեպտեմբերի 1-ին ուժի մեջ մտավ Վրաստանի եւ Եվրոպայի ազատ առեւտրի ասոցիացիայի (EFTA) միջեւ պայմանագիրը: Նախնական փուլում համաձայնագիրը կգործի միայն Վրաստանի եւ Նորվեգիայի ու Իսլանդիայի միջեւ:*

Շվեյցարիայի եւ Լիխտենշտեյնի կողմից համաձայնագրի վավերացումից երեք ամիս անց, այն ուժի մեջ կմտնի այդ երկրների հետ հարաբերություններում:

Վրաստանի եւ EFTA-ի միջեւ ազատ առեւտրի համաձայնագիրն ստորագրվել էր Բեռնում, 2016 թվականի հունիսի 27-ին, Եվրոպայի ազատ առեւտրի ասոցիացիայի մինիստերիալի շրջանակներում: Վրաստանի եւ այդ ասոցիացիայի անդամ երկրների միջեւ ազատ առեւտրի համաձայնագիրը Վրաստանում գործող արտադրություններին հնարավորություն է ընձեռում առանց սակագնային արգելագծերի իրենց արտադրանքի մի մասը դուրս բերել 14 միլիոնանոց բարձր գնողականություն ունեցող շուկա:

Համաձայնագիրը ներառում է այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ ապրանքների առեւտուրը, սպասարկումների առեւտուրը, սանիտարական, ֆիտոսանիտարական միջոցառումները, առեւտրում տեխնիկական արգելքները, ապրանքի ծագման կարգը, մաքսային հարցերում առեւտրի աջակցությունը եւ համագործակցությունը, մտավոր սեփականությունը, պետական գնումները, մրցակցությունը, առեւտրում պաշտպանական միջոցները եւ կայուն զարգացումը:

Հատկանշական է, որ, համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո, Վրաստանի հետ ազատականացված արտոնյալ մաքսային սակագներով օրինակարգը գործում է 41 երկրների հետ:

***ՎՐԱՍՏԱՆԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ***

ԴԻՄԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

## ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՄԻՋԱԴԵՊ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՈՒՄ

*Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից տարածած տեղեկության համաձայն, սեպտեմբերի 2-ին Ախալքալաքիում խորհրդարանի նախկին պատգամավոր Սամվել Պետրոսյանն ու նրա որդին՝ Գեւորգ Պետրոսյանը, սպառնացել են Շրջանային ընտրական հանձնաժողովի նախագահ Համիկ Մառանգոզյանին:*

Հաղորդագրությունում նշված է. «Շրջանային հանձնաժողովի նախագահին սպառնացել են ինչպես նրա կյանքի, ընտանիքի անդամների ապօրինի ազատազրկմամբ, այնպես էլ գույքային վնաս հասցնելով, մասնավորապես՝ տունն այրելով: Հատկանշական է, որ Համիկ Մառանգոզյանի դիմումի համաձայն, նմանատիպ սպառնալիքները նշված մարդկանց կողմից արդեն բազմիցս կրկնվում են:

Ինչպես հայտարարեց ԿԸՀ մամլո խոսնակը, Սամվել Պետրոսյանը ճանապարհին կանգնեցրել է նաեւ շրջանային ընտրական հանձնաժողովի փոխնախագահ Պաատա Փանջիկիձեին եւ պահանջել նրանից բացատրություն նրա գործունեության դիմաց: Ըստ ԿԸՀ մամլո խոսնակի, այդ տեղեկատվությունը փոխանցվել է դատախազություն հանգամանքները պարզաբանելու համար:

Իր հերթին, Համիկ Մառանգոզյանը, հրաժարվում է միջադեպի մեկնաբանությունից՝ նշելով որ հեռախոսով պատմել է այն ամենը, ինչ ասել է ԿԸՀ մամլո խոսնակը:

Ինչ վերաբերում է Սամվել Պետրոսյանին, ապա նրա խոսքով, իր կողմից որեւէ սպառնալիք չի եղել:



### ՀԱՅԱՍՏԱՆՑԻ ՀԱՆԳՍՏԱՑՈՂԸ ՈՒՐԵԿԻՈՒՄ ՓՐԿԵՑ 12-ԱՄՅԱ ԴԱԹՈՅԻ ԿՅԱՆՔԸ



*Վրաստանի սեւծովյա ափին հանգստացող հայաստանցի Աշոտ Կարապետյանը փրկել է 12-ամյա վրացի Դաթոյին, ով խեղդվելիս է եղել Ուրեկիում, ափից 30 մետր հեռավորության վրա: Այս մասին հայտնում է aliq.media-ն:*

*Աշոտը խեղդվող տղային նկատեց, երբ նա արդեն գրեթե ջրի տակ էր: Երեւանցի հանգստացողը, ով Ուրեկիում իր հանգիստն էր անցկացնում, ժամանակին արձագանքեց եւ տղային ափ դուրս բերեց: Եվ դա, երեւի, պատահական չէր: Ինչպես պարզվեց, Աշոտ Կարապետյանը պրոֆեսիոնալ փրկարար է եւ 1989 թվականից աշխատում է փրկարար ծառայության համակարգում, ներկայումս Հայաստանի արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ջոկատի հրամանատարն է:*

### ԱՆՁՆ ՀԱՍՏԱՏՈՂ ԱՆՎՃԱՐ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐ

*Ընտրական ցուցակները պարզեցնելու նպատակով, պետական ծառայությունները քաղաքացիներին անձը հաստատող վկայականները մինչեւ հոկտեմբերի 31-ը կտրամադրեն անվճար:*

*Ակցիան վերաբերում է այն քաղաքացիներին, որոնք չունեն անձը հաստատող ոչ մի փաստաթուղթ:*

*Ծառայությունից օգտվելու համար հետաքրքրված քաղաքացիները պետք է դիմեն արդարադատության տուն եւ հանրային կենտրոններ:*

### ԱՖՂԱՆՍՏԱՆՈՒՄ ՎԻՐԱՎՈՐՎԵԼ Է ԵՐԵՔ ՎՐԱՑԻ ԶԻՆԾԱՌԱՅՈՂ

*Վրացի երեք զինծառայողներ են վիրավորվել Աֆղանստանի Բաղրամի ավիաբազայի վրա կատարված հարձակման հետեւանքով:*

*Ինչպես ասված է Վրաստանի պաշտպանության նախարարության տարածած հայտարարության մեջ, Աֆղանստանում, Բաղրամի ավիաբազայի վրա մահապարտի հարձակման հետեւանքով, տուժել են հետեւակային գումարտակի վրացի երեք զինծառայողներ, որոնք մասնակցում էին «Վճռական աջակցություն» առաքելությանը:*

*Տուժած ավագ լեյտենանտ Իվերի Բուաձեի վիճակը ծանր է, նրան վիրահատել են: Մյուս երկու զինվորականները թեթեւ վերքեր են ստացել:*

### ՏԱՐԱԴՐԱՄԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿՈՒՐՍԸ
(8 սեպտեմբերի)

*Ազգային բանկի կողմից սահմանվել է տարադրամի հետեւյալ կուրսը.*

| ՏԱՐԱԴՐԱՄ | ԱՌՔ | ՎԱՃԱՌՔ |
|---|---|---|
| ԱՄՆ ԴՈԼԱՐ | 2.425 | 2.495 |
| ԵՎՐՈ | 2.904 | 3.038 |
| ՌՈՒԲԼԻ | 0.040 | 0.047 |
| ԴՐԱՄ | 0.0038 | 0.0056 |

*Սեպտեմբերի 1-ի համեմատ, դոլարի կուրսը աճել է 0,002 լարիով:*

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 15-ԻՆ ՍԿՍՎՈՒՄ Է ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆ

# ԱԼԵՔՍԱՆԴՐ ՋԵՋԵԼԱՎԱ. «ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՑԱԾՐ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՕԳՏԻՆ Է»



*Հանդես գալով վրացական «Իմեդի» հեռուստաընկերության եթերում՝ Վրաստանի կրթության եւ գիտության նախարար Ալեքսանդր Ջեջելավան հայտարարեց, որ աշխարհի շատ երկրներում ուսուցիչների աշխատավարձը հատուկ է ցածր սահմանվում, որպեսզի ուսուցչի աշխատանքը չգայթակղի նրանց, ովքեր չեն սիրում երեխաներին:*



Ըստ նրա, մանկավարժության ոլորտում պետք է աշխատեն այնպիսիք, ում համար ուսուցանելը «հոբբի» է: Նա նշեց, որ իր առաքելությունն է վերադարձնել ուսուցչի իրական կերպարը, եւ նա մտադիր է այդ ուղղությամբ գործադրել բոլոր ջանքերը հանուն ուսուցչի բարօրության:

- Հետեւեք վիճակագրությանը, որովհետեւ ոչ միայն մեզ մոտ, այլ ամբողջ աշխարհում, բացառությամբ 3-4 երկրների, իրականում ուսուցչի աշխատավարձը զգալիորեն ցածր է երկրի միջին աշխատավարձից: Եվ գիտեք ինչու, որովհետեւ եթե մանկավարժը բարձր վարձատրություն ունենա, ապա բնագավառը չի ունենա նվիրյալներ, ովքեր չեն սիրում երեխաներին, իսկ դա առավել քան վտանգավոր է,- հայտարարեց կրթության նախարարն ու հավելեց, որ, անշուշտ, աշխատավարձն էլ, իր հերթին, պետք է համարժեք լինի:

Ալեքսանդր Ջեջելավան նաեւ ընդգծեց, որ ուսուցիչների հիմնական աշխատավարձը վերջին տարիներին աճել է երեք անգամ, գումարած հավելումները:

Դիմելով բարձրագույն կրթություն ստացողներին՝ նախարարը խորհուրդ տվեց ձեռք բերել ոչ թե մեկ, այլ առնվազն երկու մասնագիտություն: Ըստ նրա, դա վերջին միտումն է, որը նկատվում է ողջ աշխարհում, ըստ որում աշխատաշուկայում կա այնպիսի մարդկանց պահանջարկ, ովքեր ունեն մի քանի մասնագիտություն: Նա ուսանողներին խնդրեց բաց չթողնել նոր բան սովորելու ոչ մի հնարավորություն:

Նշենք, որ 2017 թվականի հունվարի 1-ից ուսուցիչների միջին աշխատավարձը աճել է, եւ, ըստ դասակարգման, ունի հետեւյալ տեսքը՝ ուսուցիչ-դաստիարակը ստանում է 1100 լարի, առաջատար ուսուցիչը՝ 965 լարի, ավագ ուսուցիչը՝ 800 լարի, ուսուցիչ-պրակտիկը՝ 600 լարի:

# ՄԹԵՐՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԲՈՒՖԵՏՆԵՐՈՒՄ

*Ընթացիկ ուսումնական տարվանից դպրոցական բուֆետներում կարգելվի վնասակար մթերքների վաճառքը:*



Ինչպես տեղեկացնում է տնտեսական bpn.ge հարթակը, համապատասխան հրամանագիրը ստորագրել է Վրաստանի կրթության եւ գիտության նախարար Ալեքսանդր Ջեջելավան:

Հրամանագրի համաձայն, դպրոցական սննդի կազմակերպմանը արգելվում է ծամոնի, կոնֆետների, շոկոլադի, արոմատիզացված ապրանքների (օրինակ՝ չիպսեր, ժելիբոն եւ այլն) վաճառքը, բացառությամբ՝ տխիլի, մրգերի եւ բանջարեղենի, որոնց ավելացված է աղ, շաքար կամ ճարպ: Արգելվում է նաեւ մայոնեզով պատրաստված մթերքները, սունկի, նաեւ պահածոյացված մթերքների, կրեմով կարկանդակների, բացառությամբ՝ հանքային ջրերի մյուս գազային ըմպելիքների, շոգեխաշմամբ պատրաստած ձվերի վաճառքը:

Միաժամանակ, հրամանագրում նշված են այն մթերքները, որոնց վաճառքը դպրոցի բուֆետներում նպատակահարմար է: Մթերքների թվին են պատկանում մրգերը եւ բանջարեղենը, ջուրը, մրգահյութերը, կոմպոտները, կիսելը, ֆերմենտացված կաթնամթերքը (յոգուրտ), մրգահյութով եւ քիչ ճարպային կաթով կամ յոգուրտով պատրաստած ըմպելիքները (ցանկալի է կալցիումով հարստացված), թեյը եւ կականն:

Վերոնշյալ հրամանագրի պահանջների կատարման մոնիտորինգը դպրոցներում տնօրինության հետ միասին իրականացնելու է կրթության նախարարության ընդհանուր կրթության կառավարման եւ զարգացման դեպարտամենտի, մոնիտորինգի ու համակարգման վարչությունը:

Ինչպես նշեցին կրթության նախարարությունում, դպրոցական բուֆետների սպասարկման բիզնես-օպերատորների հետ ձեւակերպված պայմանագիրը անմիջապես չեղյալ է հայտարարվում:

# ՈՒՍՄԱՆ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԻՄՈՒՄՆԵՐԸ՝ ՍԵՊՏԵՄԲԵՐԻՑ



*Թբիլիսիի քաղաքապետարանը սեպտեմբերի 1-ից սկսել է սոցիալապես անապահով ուսանողների ուսման համաֆինանսավորման դիմումների ընդունումը:*

Սոցիալապես անապահով եւ առաջադեմ ուսանողների աջակցության ծրագրի շրջանակներում կֆինանսավորվեն Թբիլիսի քաղաքում գրանցված սոցիալապես անապահով ընտանիքի անդամ ուսանողները, ում վարկանիշային միավորը 70 հազարից քիչ է եւ սովորում են պետության կողմից ավտորիզացված, հավաստագրված պետական կամ մասնավոր բուհի բակալավրի, մագիստրատուրայի կամ դոկտորանտուրայի ակադեմիական աստիճանում:

Այս տարի առաջին անգամ դոկտորանտուրայի ուսանողները, ծրագրի շրջանակներում, Թբիլիսիի քաղաքապետարանից ֆինանսավորում կստանան: Նոր կարգի համաձայն, ակադեմիական բարձր առաջադիմություն ունեցող ուսանողները, ուսումնական դրամաշնորհի շրջանակներում կստանան 50-ից 100 տոկոսի ֆինանսավորում:

2017-2018 ուստարվա աշնանային կիսամյակի ֆինանսավորման համար դիմումների ընդունումը սկսվել է սեպտեմբերի 1-ից եւ կշարունակվի մինչեւ նոյեմբերի 24-ը ներառյալ:

# ԴՊՐՈՑԱԿԱՆ ՇՈՒԿԱՆ ՍԿՍՎԱԾ Է

## ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐՆ ԱԿՏԻՎ ԵՆ, ԾՆՈՂՆԵՐԸ՝ ՊԱՍՍԻՎ

*Ուսումնական տարեսկիզբը նոր ծախսերի առիթ է նաեւ: Նորը՝ որպես հաճույք, գինը, ասել է թե՝ պատիժ: Թբիլիսյան խոշոր վաճառակետերում արդեն բացվել են «Դպրոցական շուկաները», ու վաճառափեղկերին դրվել անհրաժեշտ պարագաները՝ գրենական պիտույքից մինչեւ պայուսակ ու հագուստ: Գները տարբեր են՝ ըստ որակի ու հետեւաբար՝ գրպանի: Թեեւ, ո՞ր ծնողն իր երեխային անորակ պարագայով եւ կամ հագուստով դպրոց կճանապարհի: Հենց այստեղ է, որ ցանկությունը սկսում է չհամընկնել հնարավորության հետ, եւ սեպտեմբերը մի մեծ գլխացավանք դառնում թերեւս յուրաքանչյուր ծնողի համար...*



Հարմարավետության նպատակով, «Դպրոցական շուկաներ» բացվել են Իսթ փոինթում (Ալ. Թվալճրելիձե, թիվ 2), Թբիլիսի մոլում (Դ.Աղմաշենեբելու ծառուղի, 16 կմ), Թբիլիսի ցենտրալում (Երկաթուղային կայարան, թիվ 2), Սիթի մոլում (Մ.Կոստավա 47/57) եւ Գլդանի մոլում (Խիզանիշվիլու փողոց): Շուկաները գործելու են սեպտեմբրի 1-17-ը ներառյալ: Ըստ որում, Scool Card-ի օգտատերերը կարող են այդ քարտով կատարել իրենց գնումները, որի դիմաց կկրկնապատկվեն Sool միավորներն, ու շահումներ լինեն: Այդուհանդերձ, ծնողները շարունակում են հապաղել ու սպասել հնարավոր զեղչերի: Որովհետեւ ամեն անհրաժեշտի հանրագումարն իսկապես մեծ ծախս է ներկայացնում: Ես դա ասում եմ ոչ միայն որպես լրագրող, այլեւ երկու դպրոցահասակ երեխայի մայր: Եկեք հաշվենք. այսպես, միջին որակի վերնաշապիկը տատանվում է 20-50 լարիի միջեւ, կիսաշրջազգեստը եւ կամ տաբատը՝ 25-50 լարիի միջեւ, սպորտային հագուստը՝ 35-50 լարիի միջեւ, կոշիկները՝ 30 լարիից բարձր, պայուսակը՝ 30 լարիից բարձր, գրենական պիտույքները՝ առնվազն 30-40 լարի: Երեւի ավելորդ է խոսել աշնանն ու ձմռանն անհրաժեշտ այլ հագուստների մասին, որոնք անհրաժեշտ են յուրաքանչյուր երեխային: Դե', հիմա պատկերացրեք, եթե ընտանիքում մեկից ավելի դպրոցահասակ երեխա կա, իսկ ընտանիքն էլ սոցիալապես միջին եկամտի սպառող է:

Մեզ հետ զրուցած ծնողներից **Ինգա Հարությունյանը**, ով երկու դպրոցահասակ եւ մանկապարտեզ հաճախող մեկ երեխայի մայր է, ասում է, որ յուրաքանչյուր տարի նման խնդրի առաջ է կանգնում:

- Երեխան մեծանում է, եւ ստիպված ենք լինում նորը գնել: Բացի այդ, աղջիկս ալերգիկ է, եւ բժշկի հորդորով լավ գործվածքի հագուստ եմ գնում, որպեսզի առողջությանը չվնասի, այնպես որ, տնտեսել չի ստացվում: Հաճախ վարկ եմ վերցնում ու դժվարությամբ տակից դուրս գալիս:

Զրուցակիցներիցս **Էլլա Զաքարյանը** համոզված է, որ շատ ավելի լավ կլիներ, եթե դպրոցն ունենար իր համազգեստը.

- Ծախսը մեկ կլիներ,- ասում է նա,- միգուցե համազգեստ կարելը թանկ հաճույք է, բայց գոնե գիտես, որ տարին մեկ անգամ ես հագուստի վրա ծախսելու: Այդպես էլ չնդունեցի այն, որ երեխաս յուրաքանչյուր օր իր հագնելիք շորն է ընտրում: Շատ ավելի լավ կլիներ այդ ծախսն ուղղվեր նրա մտավոր զարգացմանը՝ տարբեր խմբակների հաճախմամբ եւ այլն:

Փորձեցի ինքս «Դպրոցական շուկա» գնալ: Հենց թեկուզ համոզվելու համար, գնացի Լիլո կոչվող շուկան: Ասեղ գցելու տեղ չկար, մեկը մյուսին հերթ չէր տալիս, արդյունքում՝ դատարկաձեռն տուն եկա: Թե ինչպես եմ իմ դպրոցական առեւտուրն արել՝ այս մասին մի փոքր ուշ ու որպես խորհուրդ նաեւ: Հիմա շարունակեմ հետաքննությունս:

**Սեդա Բաղդասարյանի** հետ զրույցս առավել լավատեսական էր: Երեխաները նույն սեռի են ու նրան հաջողվում է այս առավելությունը որպես տնտեսում օգտագործել.

- Հաճախ մեկն օգտագործում է մյուսինը,- ասում է նա,- փորձում եմ որակյալը գնել ու առավել երկար օգտագործել:

Եվ սակայն, այս հարցում նույնպես հարկավոր է զգույշ լինել: Կան մատիտներ ու նաեւ գրիչներ, որոնք մեկ օգտագործման պատմություն ունեն՝ ջարդվելուց եւ կամ առաջին սրածը մաշելուց հետո, այլեւս չեն սրվում: Ես, օրինակ, շատ անգամ եմ խաբվել որակյալ-անորակի միջեւ: Գնել եմ բարձր գին ունեցող, ասենք պայուսակ կամ մեկ այլ իր, բայց՝ տուժել անորակությունից: Ի դեպ, վաճառողներն իրենք են խոստովանում, որ հաճախ նույն ֆիրմայի արտադրությունը տարբեր որակներ կարող է ունենալ... ճիշտ թե սուտ՝ չգիտեմ, բայց փաստը մնում է փաստ: Փաստորեն, սեպտեմբերի համար այդ ուղղությամբ հատուկ գիտելիքներ են հարկավոր՝ այս անգամ ծնողի համար:

Շարունակելով թեման՝ մեջբերեմ նաեւ **Ալլա Սուքիասյանի** խոսքերը, ով շատ ավելի հետաքրքիր տարբերակ առաջարկեց: Ասում է՝ Նոր տարուն դրամարկղ ենք բացում ու սկսում սեպտեմբերի համար փող հավաքել: Ըստ Ալլայի, այդպես ավելի հեշտ է լինում, ու ծախսն էլ՝ համեմատաբար քիչ թվում.

- Որքան էլ դժգոհենք, միեւնույն է ծախսելու ենք,- ասում է նա,- ուրեմն՝ ճիշտ ծախսենք:

Եվ վերջապես իմ տարբերակն առաջարկեմ. ստացվեց այնպես, որ ե'ւ գրենական պիտույք-պայուսակի, ե'ւ հագուստի ծախսերը հոգացի ուսումնական տարեվերջին: Խանութներում շատ մեծ զեղչերի շնորհիվ, զգալիորեն տնտեսեցի ու որոշեցի ամեն տարի փորձել նույն կերպ վարվել: Օրինակ, վերնաշապիկը, որ գնեցի 15 լարիով, այժմ արժե՝ 45 լարի... ի դեպ, նույն այդ զեղչերն այն ժամանակ Լիլոյում էին, ի տարբերություն այս օրերի: Գաղտնիք չէ, որ վաճառականներից շատերը խորամանկության են դիմում ու արհեստական գնաճ ստեղծում: Գիտեն, որ, միեւնույն է, գնելու ենք: Մնում է հույսներս դնենք վաճառողների բարեխղճության ու նյութիս հերոսների փորձի վրա՝ պարզապես արդեն հաջորդ ուսումնական տարի օգտագործելու համար:

Իսկ հիմա, ուսումնական օրվան ընդառաջ, մաղթեմ բոլորիս առատ, հետաքրքիր, խաղաղ ու անխափան ուսումնական տարի:

*ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ*